ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԳԻՆԵՎԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԹԻՎ 7 - Ն

23.12.2015թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## 2016Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10- րդ, 11- րդ հոդվածների՝*

## *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ*

*Հաստատել 2016թ.-ի տեղական տուրքերը և վճարները հետևյալ դրույքաչափերով.*

1. *Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանավում է հիմնական օբյեկտների համար՝*

*ա) Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև*

կազմակերպման դեպքում թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար քմ. 50 դրամ

5. Համայնքի արխիվից պաստաթղթերի պատճեններ և կրկնօրինականեր տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000դրամ;

6. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ

Օրենքի 10 հոդվածի 1, 2, 3 կետերով սահմանված դրույքաչափերը համայնքում հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

## Տեղական վճարներ

Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:

Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:

մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ;

բ) Սույն կետի »ա « ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`

բ ա) 201 – ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմնվում է 5000 դրամ:

բբ)501 –ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմնվում է 5000դրամ:

բգ) 1001- ից ավելի քառակուսի -մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմնվում է 10000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`

գ) Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ:

դ) 20 և ավելի քառակուսի – մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` մինչև 5000դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար տեղական տուրքը սահմնվում է 5000դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմնվում է`

ա) Ոգելից խմիչքների վաճառքի թույտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում թույտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար 1300 դրամ:

բ) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի

*Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանվում է*

*1000 դրամ:*

*Աղբահանության վճարի դրույքաչափը սահմանել համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր 1 անձի համար ամսական 150.0դրամ*

1.Ս.Հարությունյան կողմ

2.Ս.Գաբրիելյան կողմ

3. Հ.Քիշմիրյան կողմ

4.Վ.Հովսեփյան կողմ

5.Մ.Նաջարյան -բացակա

**Համայնքի ղեկավար՝ Մ. Սանթոյան**